https://doi.org/10.46991/hc.2022.17.1.207

Արտակ Խաչատրյան
ՀՀ վարչապետի աշխատակազմ,
Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ

ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. Լեռնային Ղարաբաղ, Հարավային Կովկաս, Ադրբեջան, Շուշի, Հադրութ, սահմանային վերաձևումներ, ԽՍՀՄ:

Խորհրդային Միության փլուզման շրջանում սկսված Արցախյան շարժումն ու դրան հաջորդած զինված հակամարտությունը նոր աստիճանի բարձրացրին այն: ԵԱՀԽ Մինսկի խմբի ստեղծմամբ հակամարտությունը միջազգայնացվեց, որի հետագա զարգացումներն ու փոխակերպումները ունակ էին փոփոխման ենթարկելու նաև Հարավային Կովկասի կերպն ու ընկալումները: Հոդվածում քննարկվում են Ադրբեջանի քաղաքականության հիմնական թիրախները, դրանց հեռահար նպատակները և ըստ այդմ՝ տարածաշրջանային և աշխարհաքաղաքական առումով վերափոխումները: Ադրբեջանը խորհրդային շրջանից շարունակաբար վարել է նպատակային տնտեսական, ժողովրդագրական, վարչաքաղաքական քաղաքականություն, որի նպատակն էր Լեռնային Ղարաբաղից հայկական տարրի հեռացումը, մշակութային ու տարածքային առումով երկրամասի աստիճանական կլանումը: Այդ քաղաքականությունը իրականացվել է խորհրդային շրջանում և հետևողականորեն շարունակվել հետխորհրդային ժամանակաշրջանում: Եվ 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերյան 44-օրյա պատերազմի արդյունքում Հարավային Կովկասը ավելի նվազ կերպով է ընկալվում որպես հետխորհրդային: Փորձեր են առկա այն արդեն դիտարկելու որպես մերձավորարևելյան տարածաշրջանի մասնիկ: Խորհրդային շրջանից եկող ավանդույթի ուժով ԽՍՀՄ փլուզումից հետ Հարավային Կովկասը, ի թիվս այլ տարածաշրջանների, շարունակվում էր դիտարկվել որպես ՌԴ ազդեցության գոտի: Հակամարտության ռազմական փուլից հետո ներկայումս տարածաշրջանում ՌԴ միանձնյա ազդեցության նվազումը հանգեցրել է Թուրքիայի ակտիվացմանը և հետագա դերակատարման հավանականությանը:

Artak Khachatryan
The Office of the Prime Minister of the Republic of Armenia,
«Public Relations and Information Center» SNCO

THE ARTSAKH PROBLEM IN MODERN GEOPOLITICAL AND REGIONAL DEVELOPMENTS

Keywords: Nagorno Karabakh, South Caucasus, Azerbaijan, Shushi, Hadrut, border configurations, USSR

The Artsakh movement started during the collapse of the Soviet Union, and the subsequent armed conflict raised it to a new level. With the establishment of the OSCE Minsk Group, the conflict was internationalized, the further development and transformations of which were able to change the perceptions and way of the South Caucasus. The article discusses the main targets of the policy of Azerbaijan, their far-reaching goals, and, accordingly, regional geopolitical transformations. Azerbaijan has continuously pursued a targeted economic, demographic, administrative-political policy since the Soviet period, the aim of which was the removal of the Armenian element from Nagorno-Karabakh, the gradual absorption of the territory in terms of culture and territory. This policy was implemented in the Soviet period and continued in the post-Soviet period. And in 2020, as a result of the 44-day war in September-November, the South Caucasus is less perceived as the post-Soviet region. There are attempts to consider it a part of the Middle East region. Following the collapse of the Soviet Union by the Soviet tradition, the South Caucasus, among other regions, continued to be viewed as a zone of Russian influence. After the military phase of the conflict, the reduction of Russia's sole influence in the region has led to the activation of Turkey and the possibility of a further role.

Артак Хачатрян
Аппарат Премьер-министра РА,
ГНКО «Центр по связям с общественностью и информации»

АРЦАХСКАЯ ПРОБЛЕМА В СОВРЕМЕННОМ ГЕОПОЛИТИЧЕСКОМ И РЕГИОНАЛЬНОМ РАЗВИТИИ

Ключевые слова. Нагорный Карабах, Южный Кавказ, Азербайджан, Шуши, Гадрут, пограничные конфигурации, СССР.

Арцахское движение началось во время распада Советского Союза, а последующий вооруженный конфликт поднял его на новый уровень. С созданием Минской группы ОБСЕ конфликт интернационализировался, дальнейшее развитие и трансформация которого смогли изменить путь и восприятие Южного Кавказа. В статье рассматриваются основные цели политики Азербайджана, их далеко идущие цели и, соответственно, региональные геополитические трансформации. Азербайджан с советского периода непрерывно проводил целенаправленную экономическую, демографическую, административно-политическую политику, целью которой было устранение армянского элемента из Нагорного Карабаха, постепенное поглощение территории в культурно-территориальном отношении. Эта политика проводилась в советский период и продолжилась в постсоветский период. А в результате 44-дневной войны в сентябре-ноябре 2020 года Южный Кавказ в меньшей степени

воспринимается как постсоветский. Есть попытки рассматривать его как часть ближневосточного региона. После распада СССР в силу советской традиции Южный Кавказ в числе других регионов продолжал рассматриваться как зона российского влияния. После военной фазы конфликта сокращение единоличного влияния России в регионе привело к активизации Турции и возможности ее дальнейшей роли.

* * *

Ներածություն: Քաղաքական մարդաբանության փորձառությունը ցույց է տալիս այն փաստի իսկությունը, որ հակամարտությունները վերափոխիչ դերակատարում են ունենում պետությունների կյանքում, ինչպես նաև տարածաշրջանների քաղաքական զարգացումներում, ոչ հազվադեպ՝ հանգեցնում նաև աշխարհաքաղաքական փոփոխությունների ու նոր վերադասավորումների: ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում նույնպես սկսվեցին նոր գործընթացներ ու վերադասավորումներ: Ակնհայտ է, որ բոլոր այդ տեղաշարժերն ու վերափոխությունները կատարվում էին ոչ թե աստիճանաբար, էվոլյուցիոն ուղով, այլ կտրուկ, «շոկային» մեթոդներով, ինչը, մեր կարծիքով, իր հերթին անդրադառնալու էր այդ ամենին հետևող իրադարձությունների և ընդհանուր համայնապատկերի որակական հատկանիշների ձևավորման վրա: Դա բնական է, քանզի անցումային պատմաշրջանի կարևոր հատկանիշներից են սոցիալական կենսագործունեության հիմնական ոլորտներում սրընթաց իրադարձություններն ու դինամիկ փոփոխությունները (Հարությունյան, 2008, 219): Կովկասն այն տարածաշրջաններից է, որտեղ հակամարտությունները ծավալվեցին առանձին դաժանությամբ ու դրսևորումներով: Եվ այստեղ պակաս կարևոր չէր ԽՍՀՄ իշխանությունների ներդրումը, որոնք, չնայած Գորբաչովի հռչակած վերակառուցման քաղաքականությանը, շարունակում էին գործել ավանդական կոշտ մեթոդներով: Լեռնային Ղարաբաղում դեռևս 1988 թ. ամռանը առկա զորքերի փաստը չէր թաքցնում անգամ մամուլը (Демидов, Правда, 24.07.1988): Այդուամենայնիվ, 1988 թ. սկզբնավորված շարժումը ցույց դրեց միութենական ծայրամասերում խորհրդային պետական գործիչների ոչ միատարր պահվածքն ու դրսևորումները: Եթե Հայաստանում շարժումը գլխավորեցին ինքնուրույն, ոչ կուսակցական դեմքեր, ապա Լեռնային Ղարաբաղում, շարժման ծավալումից սկսած, խորհրդային իշխանության մարմինները անցան ժողովրդի կողմը և գլխավորեցին շարժումը (Саркисян, 2010, 17): Եվ ըստ այդմ էլ՝ Արցախյան շարժումը ներկայացված էր հիմնականում երկու գլխավոր հոսանքներով՝ մեկը՝ Հայաստանում, մյուսը՝ Արցախում (Abrahamian, 2001, 117): Արցախում շարժման առաջնորդումը խորհրդային տեղական իշխանությունների ներկայացուցիչների կողմից ի ցույց է դնում այն հանգամանքը, որ Կենտրոնի իշխանությունների քաղաքականությունը միանշանակ ու անվերապահորեն չէր ընդունվում նաև միութենական հարապետությունների տեղական կուսակցական ներկայացուցիչների մոտ: Դա հատկանշական է այն առումով, որ չնայած վերակառուցման քաղաքականությանը՝ ազգային հարցում մոսկովյան Կենտրոնը չէր ձերբազատվել անցյալի վարքագծից, որն ավելի ակներև դարձավ սումգայիթյան իրադարձությունների ընթացքում և դրան հաջորդած դատավարությունների ընթացքում (Խոջաբեկյան, 2005, 28): Մոսկվայի գործելաոճին զուգակցվում էին ադրբեջանական կողմի մանիպուլյացիաները նաև տեղեկատվական ոլորտում: Իրականության խեղաթյուրումները սկզբնավորվեցին հենց

սումգայիթյան ջարդերից անմիջապես հետո և անձամբ ադրբեջանական մտավորականության ներկայացուցիչներից Զիյա Բունիաթովի ձեռամբ, որը պնդում էր, որ Սումգայիթի ջարդերը կազմակերպել են հենց հայերը (Харатян, 2014, 97-98)։ Նման քաղաքական վարքագիծը հանգեցնելու էր սկզբնական շրջանում վերակառուցման հայտնի կարգախոսներով առաջնորդվող շարժման կերպափոխմանը դեպի անկախության գաղափար։ Իհարկե, հիասթափությունը խորհրդային ղեկավարությունից կատարվեց աստիճանաբար, ոչ միանգամից։ Դրա վկայություններից մեկն էր նաև Լեռնային Ղարաբաղ մուտք գործող խորհրդային զորքին ծաղիկներով դիմավորելու փաստը (Պետրոսեան, 2004, 113-114)։ Սակայն ներքաղաքական խմորումները, Ադրբեջանի և խորհրդային Կենտրոնի համադիր գործողությունները հանգեցրին 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ անկախության հռչակմանը, որով պայքարի զինված փուլն ավելի կազմակերպված բնույթ կրեց, երբ ՀՅԴ ակտիվ գործունեությանը զուգահեռ Հայոց համազգային շարժումն էլ սկսեց դեպի Արցախ զենքի մատակարարումը և ջոկատների զինումը (Հակոբյան, 2011, 40)։ Սա պատահական բնույթ չէր կրում։ Ի թիվս այլ հանգամանքների՝ ՀՀ-ին անհրաժեշտ էր ԼՂՀ-ում կանխատեսելի և իրեն համակիր իշխանություն։ Դա ՀՀ իշխանությունների համար օրվա հրամայական դարձավ հատկապես այն բանից հետո, երբ 1992 թ. գարնանը Լեռնային Ղարաբաղի խնդիրը միջազգայնացվեց, ինչը պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզումից հետո երկրաքաղաքական նոր իրադրության պայմաններում համաշխարհային ու տարածաշրջանային խոշոր տերությունների կողմից Հարավային Կովկասում ազդեցության ոլորտների վերաբաշխման գործընթացների մեկնարկով (Григорян, 2001, 17)։ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումն իր վրա վերցրեց ԵԱՀԽ Մինսկի խումբը։

Արցախյան խնդրի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական կերպափոխումը։ Արցախյան հիմնախնդիրը դարձավ այն անկյունաքարային բաղադրիչը, որն ուղեկցեց Հայաստանի անկախության գործընթացը, և որը, ՀՀ անկախացումից սկսած, դարձավ վերջինիս ներքաղաքական ու արտաքին քաղաքական կլիման պայմանավորող գործոն։ Այս հիմնախնդիրը, ըստ էության, աշխարհի հետ ՀՀ երկխոսելու, փոխառնչակումների առանցքն էր։ Դա պայմանավորված էր նրանով, որ խնդրի միջազգայնացումից հետո ՀՀ-ն ներգրավվեց բանակցային գործընթացում որպես միջնորդ, ինչպես նաև ԼՂՀ անվտանգության երաշխավոր։

Մեր աշխատանքի հանրագումարը թույլ է տալիս ասել, որ Ղարաբաղյան հակամարտության փոխակերպումները ունեցել են իրենց ազդեցությունը և ներդրումը տարածաշրջանային զարգացումներում։ Դա վերաբերելի է նաև ներկայիս իրավիճակին։ Բանն այն է, որ Ղարաբաղյան հակամարտությունը փոխեց գոնե Հարավային Կովկասի մասին խոսույթն աշխարհում։ 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերյան 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասը դադարում է լինել հետխորհրդային. արդեն խոսվում է այն մասին, որ փոխվում է կոնֆիգուրացիան (**Celalettin Yavuz,** Güney Kafkasya'da değişim rüzgarları esiyor; Тарасов, Россия в Закавказье: перед отступлением или броском вперед?; Тарасов, Новая геополитическая хореография в Закавказье: вместо «3+3»- «3+2»), անգամ դիտարկվում է, որ այն կարող է դառնալ մերձավորարևելյան տարածաշրջանի մի մասնիկը (Тренин, Россия и Закавказье через год после войны в Карабахе. Послесловие к книге «Буря на Кавказе»)։ Այն հետխորհրդային առավել լայն

համապատկերի դիտարկման դեպքում ՌԴ-ի ու ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական դիմակայության առանցքում նույնիսկ Արցախը չէ, այլ Վրաստանն ու Ուկրաինան, քանզի ռուսական ինքնությունը այս երկու պերիֆերիան միշտ էլ կարևորել է: Ըստ էության, դա զգայական դրսևորումն է: Թիֆլիսը ռուսական կայսերական սիմվոլիկայի համար Հարավային Կովկասի Վլադիկավկազն է: Ռուսաստանյան քաղաքական վերնախավը Թիֆլիսը դարձրեց Կովկասի փոխարքայության կենտրոն՝ այն դիրքավորելով որպես ռուսաստանյան քաղաքական ու կայսերական ինքնության կարևորագույն առանցքներից մեկը: Եվ հետագա տարածաշրջանային անցուդարձերի ու զարգացումների համատեքստում կայսերական քաղաքականությունը զգայուն էր արձագանքում Կովկասում, իսկ տվյալ դեպքում՝ Հարավային Կովկասում ծավալվող փոփոխություններին:

ՀՀ անկախությունից հետո անցած երեսուն տարիներին շատ զարգացումներ են եղել, բայց հարցի կիրառական նշանակությունը այն է, որ հետահայեցողության (ռետրոսպեկցիայի) մեթոդով հնարավոր է ապացուցել, որ ազգային քաղաքականությունը ոչ միայն ծնունդ է տվել Ղարաբաղյան հակամարտությանը, այլև ձևավորել է հետագայի փոխակերպումները: Եվ մեր աշխատանքի հանրագումարը թույլ է տալիս ամփոփել խորհրդային ազգային քաղաքականության հիմնարդյունքները, ըստ այդմ՝ դիտարկել հիմնական միտումներն ու փոխակերպումները:

Ադրբեջանի քաղաքականության ազդեցությունները խնդրի փոխակերպումներում: Այսպիսով՝ արձանագրենք, որ Ադրբեջանի նկրտումները հետխորհրդային ժամանակաշրջանում, հատկապես 1994 թ. զինադադարից հետո ամենևին նորություն չէին: Անկախ Ադրբեջանի վարած քաղաքական գիծը շարունակում էր Խորհրդային Ադրբեջանի ազգային-պետական քաղաքականության հիմնագծերի տրամաբանությունը: Ադրբեջանի կողմից ղարաբաղյան հակամարտության սեփական մեկնաբանության հիմքում խնդիրը որպես տարածքային վեճ ձևակերպելը առկա է այդ պետության կազմավորման ժամանակներից: 1918 թ. կազմավորված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը տարածքային առումով ժառանգել էր նախկին Ցարական Ռուսաստանի Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգները, վերջինիս կազմի մեջ էր ընդգրկված եղել Լեռնային Ղարաբաղը: Թերևս, վերջին հանգամանքը պայմանավորել է Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տարածքային նկրտումներն ու հակամարտության մեջ տարածքային ամբողջականության իրավունքի բարձրաձայնումը:

Ադրբեջանական քաղաքականությունը խորհրդային շրջանից ցայսօր հետևողականորեն վարել է կոնկրետ աշխարհագրական թիրախավորմամբ տնտեսաժողովրդագրական քաղաքականություն ԼՂԻՄ-ում: Դեռևս խորհրդային շրջանից ադրբեջանական քաղաքականությունը ԼՂԻՄ-ի տնտեսատարածքային ու վարչաքաղաքական զարգացման համատեքստում ուներ թիրախավորված ուղղություններ: Արդեն հիշատակել ենք, որ Խորհրդային Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղին ինքնավարության կարգավիճակի տրամադրելը 1921 թ. Կովբյուրոյի հայտնի որոշումից հետո ձգձգեց շուրջ երկու տարի և միայն 1923 թ. ամռանը ձեռնամուխ եղավ դրա իրականացման աշխատանքներին: Սակայն նույնիսկ այդ դեպքում էլ աշխատանքները շարունակաբար դանդաղել ու ձգձգվել են, և անգամ 1928 թ. դրությամբ ԼՂԻՄ-ի սահմանները հայտնի «Կարմիր Քուրդիստանի» հետ դեռևս հստակ որոշված չէին (Սեյրան,

1928, 7)։ Այդ հանգամանքը պատահական չէր։ Խորհրդային Ադրբեջանի նման քաղաքականությունը նպատակ ուներ Լեռնային Ղարաբաղից վարչաքաղաքական տարակերպ վերաձևումների արդյունքում պոկելու նորանոր հողալեզվակներ և յուրացնելու դրանք։ Իհարկե, Լեռնային Ղարաբաղի բուն տարածքից հողալեզվակների շարունակական յուրացումներն ու վարչական վերափոխումների արդյունքում բուն Ադրբեջանի տարածքի մեջ տարրալուծելը ունեին հստակ քաղաքական նպատակադրվածություն։ Այդպիսով՝ կրճատվում էր Խորհրդային Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի ցամաքային կապը։ Ասվածի ապացույցներից է ներքոբերյալ քարտեզը[1]։


ՀՍԽՀ-ի ԵՎ ԼՂԻՄ-ի ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 1923-1930-ական թթ.
Մասշտաբ 1:1 400 000
ԼՂԻՄ-ի մայրաքաղաքը
Քաղաք
Այլ բնակավայր
Վանք
Բերդ
Գանձակ, Վիրովաբադ
Ստեփանակերտ
Շուշի
Գորիս
Դարաբիլիսա (Սիսիան)
Նախիջևան
Օրդուբադ
Սևանա լիճ
Տաթևի վանք
Գանձասար
Դադիվանք
Խոտանանիր
Ասկերան
Մարտակերտ
Մարտունի
Թարթառ
Ջրաբերդ
Ավետարանոց
Գանձակ
Ղազանչի
Գյուլիստան
Գյուլիստանի
Գյուլիստիր
Աշան
Նիկոլայևկա (Խոնաշեն, Մարտունի)
Ճարտար
Վերին Ալիսարլու
Սոս
Ամիրարանց (Շանաբիր)
Գանձակ
Տող
Գետք
Հաղրութ
Ջարդիլի
Ղարաբուլաղ
Ղարաբաղլար
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ

Քարտեզում ուղղահայաց, հորիզոնական և աջից ձախ շեղակի գունավոր գծերով առանձնացված տարածքները այն տարածքներն են, որոնք յուրացվել են Խորհրդային Ադրբեջանի կողմից ԼՂԻՄ-ից ու ՀԽՍՀ-ից: Աջից ձախ շեղակի կապույտ գծերով ցուցադրվում է Կարմիր Քրդստանը, որը հետագայում որպես ինքնավարություն վերացվեց, տարածքներն էլ տարրալուծվեցին Խորհրդային Ադրբեջանի կազմում: Ընդ որում՝ Կարմիր Քրդստանի կազմավորման արհեստականությունը ակնբախ ցուցադրում է այն փաստը, որ 1923 թ.՝ Քրդստանի ստեղծումից հետո, այդ տարածքում ապրողների մեծ մասը սկսեց իրենց անվանել քուրդ՝ հենց տարածքի անվանումից ելնելով (Волкова, 1969, 58): Քարտեզը շատ լավ ցույց է տալիս, թե հյուսիսից հարավ ձգվող ողջ երկայնքով Խորհրդային Ադրբեջանը ինչպիսի նպատակադրված քաղաքականության միջոցով հասել է նրան, որ Խորհրդային Հայաստանի ու ԼՂԻՄ-ի միջև միակ կապող օղակը մնացել է Լաչինը: Հենց սահմանային շարունակական վերաձևումներն են պատճառը, որ խորհրդային քարտեզներում սահմանները տարբերվում են, ինչպես, օրինակ, 1928թ. ԽՍՀՄ ատլասում Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ քարտեզները ԼՂԻՄ-ի միմյանցից տարբերվող սահմաններով են ներկայացնում (Saparov, 2015, 118): Դա կարող էր լինել այն բանի արդյունք, որ ԼՂԻՄ տարածքային սահմանները շարունակաբար փոփոխությունների էին ենթարկվում: Խորհրդային Ադրբեջանի քաղաքականությունը չէր սահմանափակվում տարածքային նպատակադրված յուրացմամբ: Հատկապես 1960-1970-ական թվականներից ավելի սաստկացան հայաթափման այլատիպ դրսևորումները ԼՂԻՄ-ում: Ստեփանակերտում բացված Մանկավարժական ինստիտուտն անշեղորեն վերածվում էր ադրբեջանականի, քանզի հայկական դպրոցներում նվազում էր սովորողների թիվը՝ հակառակ զուգընթաց աճող ադրբեջանականի, իրավապահ համակարգում շարունակաբար աճում էր ադրբեջանցի աշխատողների թիվը, հայկական բնակավայրերում որպես մանագետներ աշխատում էին կրկին ադրբեջանցիները, անգամ արգելվեց ռադիոհեռարձակումների ընդունումը Երևանից (Мирзоян, 2020, 330): Միով բանիվ, Ադրբեջանը նպատակամղված էր Լեռնային Ղարաբաղը մեկուսացնել, անջատել Հայաստանից ոչ միայն տարածքային-աշխարհագրական, այլև հոգևոր-մշակութային առումով:

Եզրակացություն: Դեռևս խորհրդային շրջանից Ադրբեջանի քաղաքականության համատեքստում հատկապես թիրախավորված էին ԼՂԻՄ Մարտակերտի և Հադրութի շրջանները: Այդ քաղաքականությունը իրականացվել է և չի սահմանափակվել միայն 1920-ական թթ.: Անդրֆեդերացիայի կազմալուծումից հետո Հադրութից պոկվեցին ու Ֆիզուլու, Լաչինի շրջաններին միացվեցին Հարար և Հողեր գյուղերը (Բալայան, 2002, 341): Նպատակը այդ շրջանների տնտեսական, ժողովրդագրական և տարածքային թուլացումն էր, որովհետև այդտեղից էր անցնելու դեպի Նախիջևան ձգվող ճանապարհը: Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի հանգուցային կետերը հայաթափելու քաղաքականության լավագույն օրինակներից մեկը Շուշիի բնակչության շարժընթացն է XX դարի առաջին քսանամյակը: 1914 թ. Շուշին ուներ 42.130 բնակիչ, որից 22.004-ը՝ հայեր, իսկ արդեն 1921 թ.՝ 9223 բնակիչ, որից 8894-ը՝ թյուրքեր, 289-ը՝ հայեր (Карапетян, 1991, 10): Խորհրդային շրջանից կայունաբար շարունակվող հայաթափման քաղաքականության մասին անթաքույց խոսել է հենց Հեյդար Ալիևը, որը դեռևս Խորհրդային Ադրբեջանի ՊԱԿ-ի ղեկավար աշխատելու տարիներին, մասնավորապես 1969 թ. իր զեկուցագրերից մեկում նշել էր, որ Լեռնային Ղարաբաղը

Ադրբեջանի կազմից դուրս գալու տրամադրություններ, ի թիվս հասարակության այլ շերտերի, առկա են նաև կոմերիտականների շրջանում (Барсегов, 2008, 658):

Հ. Ալիևը 2002 թ. ադրբեջանական «Зеркало» թերթին տված հարցազրույցում նշում էր, որ առաջին քարտուղար եղած ժամանակ փորձել է փոխել Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը՝ վկայաբերելով, որ երբ բարձրացվեց Ստեփանակերտում բուհ բացելու հարցը, ինքը համաձայնեց դրան պայմանով, որ այն ունենա երեք բաժանմունք՝ ռուսական, ադրբեջանական, հայկական: Եվ հարակից շրջանների ադրբեջանցիներին ուղարկում էին սովորելու ոչ թե Բաքու, այլ Ստեփանակերտ: Բացվեց նաև կոշիկի ֆաբրիկա, որտեղ աշխատելու էին ուղարկվում ԼՂԻՄ-ին հարակից շրջաններից ադրբեջանիցներին: Այս ասվածն ամփոփելով էլ՝ Ալիևը հստակորեն ընդգծում է, որ իր նպատակն էր այս և այլ միջոցներով անել այնպես, որ Լեռնային Ղարաբաղում լինեին ավելի շատ ադրբեջանցիներ, իսկ հայերի թվաքանակը նվազեր («Зеркало», 23.07.2002): Եվ Իլհամ Ալիևը, ըստ էության, նոր բան չի արել, նա շարունակել է խորհրդային շրջանից ձգվող քաղաքականությունը: Հադրութի թուլացմամբ թուլանում էր Լեռնային Ղարաբաղի հարավը, Մարտակերտի ու Շահումյանի թուլացմամբ՝ հյուսիսը: Հյուսիսի այդ ուղղությամբ էլ պետք է անցներ դեպի Սևան գնացող ճանապարհը, այդտեղից՝ Ջերմուկ, Ջերմուկից էլ՝ Նախիջևան:

Հադրութի ու Մարտակերտի ուղղությունների թիրախավորումն ուներ նաև ռազմավարական նշանակություն: Այս ուղղություններում գերակայությունը Ադրբեջանին ապահովագրելու էին ռազմական առումով: Այդ ուղղություններում գերակայությունը երաշխավորելու էր Ադրբեջանի հյուսիսային ու հարավային թևերից նվազ խոցելիությունը: Հադրութի ուղղությամբ ռազմական գործողությունների ծավալման դեպքում Ադրբեջանի հարավային թևում Իրանի հետ սահմանն է, որի պատերազմական գործողություններին մասնակցելու հավանականությունը բավական նվազ է: Հյուսիսում՝ Մարտակերտ-Քարվաճառ գծով ռազմական գործողությունների դեպքում վերին աջ թևում Ադրբեջանի տարածքն է: Ըստ այդմ՝ հավանական ռազմական գործողությունների ծավալման դեպքում Ադրբեջանն ապահովագրվելու էր մի քանի ճակատով պատերազմելու հեռանկարից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բալայան Վ. (2002),** Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր., «Ամարաս», 408 էջ:
2. Խոջաբեկյան Վ., Ցեղասպանությունը և հայաթափությունը Ադրբեջանում (1918-1990-ական թթ.) // «Պատմաբանասիրական հանդես», 2005, 1, Եր., էջ 21-41:
3. **Հակոբյան Տ. (2011),** ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Եր., 208 էջ:
4. **Հարությունյան Գ. (2008),** Անցումային ժամանակաշրջանի զարգացման փուլերը և հոգեբանական պաշտպանական մեխանիզմները փոխակերպվող հասարակությունում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1, Եր., էջ 218-228:
5. **Պետրոսեան Ա. (2004),** Արթուր Մկրտչեան, Եր., 304 էջ:
6. **Մեյրան Գ. (1928),** Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 100 էջ:
7. **Барсегов Ю. (2008), Нагорный Карабах в международном праве и мировой политике.** Документы и комментарий, В 2 т., т. 1., М.: КРУГЪ, 944 с.:

8. **Волкова Н. (1969),** Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., Кавказский этнографический сборник, т. 4, отв. ред. В. К. Гарданов, Изд-во «Наука», М., с. 3-70.
9. **Григорян Ал. (2001),** Армяно-азербайджанские отношения: Реалии и перспективы, Армянский центр стратегических и национальных и исследований, Ер., 111 с.:
10.**Демидов Н.,** И снова Нагорный Карабах // «Правда», 1988-07-24:
11.«Зеркало», 23.07.2002.
12.**Мирзоян Б. (2020),** Нагорный Карабах (Размышления над статистикой), Արցախի ժողովրդագիտությունը. Ազգագրություն, հ. 4 (4), Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարան, էջ 318-336:
13.**Карапетян М. (1991),** Этническая структура населения Нагорного Карабаха в 1921г. (По сельско-хозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ер., 20 с.:
14.Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. глазами очевидцев (2014), Составители Гриша Оганезов, Грануш Харатян, Ер.: Изд-во «Гитутюн» НАН РА, 534 с.:
15.**Саркисян М. (2010),** Нагорный Карабах; война и политика (1990-1993 гг.). Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в армянском обществе, Ер.: Армянский центр стратегических и национальных исследований, 219 с.:
16.**Тарасов Ст.,** Россия в Закавказье: перед отступлением или броском вперед? https://regnum.ru/news/polit/3402302.html (վերջին մուտքը՝ 18.02.2022).
17.**Тарасов Ст.,** Новая геополитическая хореография в Закаыказье: вместо «3+3»- «3+2», https://regnum.ru/news/polit/3448258.html (վերջին մուտքը՝ 18.02.2022).
18.Тренин Д., Россия и Закавказье через год после войны в Карабахе. Послесловие к книге «Буря на Кавказе», https://carnegie.ru/commentary/85683 (վերջին մուտքը՝ 19.02.2022).
19.**Abrahamian L. Hm. (2001),** Civil society born in the square: the Karabagh Movement in Perspective, The Making of Nagorno-Karabagh: From Secession to Republic, Edited by Levon Chorbajian, Houndmills, Basingstoke, Hampshire; New York: Palgrave, pp. 116-134.
20.**Saparov A. (2015),** From conflict to autonomy in the Caucasus. The Soviet Union and the making of Abkhazia, South Ossetia and Nagorno Karabakh, Routledge, London and New York, 200 p.:
21.**Celalettin Yavuz,** Güney Kafkasya'da değişim rüzgarları esiyor!, https://www.yenisafak.com/dusunce-gunlugu/guney-kafkasyada-degisim-ruzgarlari-esiyor-3745296 (վերջին մուտքը՝ 18.02.2022).

REFERENCES

1. **Balayan V. (2002),** Arts'akhi patmut'yunĕ hnadarits' minch'ew mjer ōrjerĕ, JEr., «Amaras», 408 ēj:
2. Khojabjekyan V., TS'jeghaspanut'yunĕ ew hayat'ap'ut'yunĕ Adrbjejanum (1918-1990-akan t't'.) // «Patmabanasirakan handjes», 2005, 1, JEr., ēj 21-41:
3. **Hakobyan T. (2011),** LGHH hrch'akumĕ ew pjetakan shinararut'yan gortsĕnt'ats'ĕ (1991-1994 t't'.), JEr., 208 ēj:
4. **Harut'yunyan G. (2008),** Ants'umayin zh'amanakashrjani zargats'man p'uljerĕ ew hogjebanakan pashtpanakan mjekhanizmnjerĕ p'okhakjerpvogh hasarakut'yunum, «Lrabjer hasarakakan gitut'yunnjeri», 1, JEr., ēj 218-228:
5. **Pjetrosjean A. (2004),** Art'ur Mkrtch'jean, JEr., 304 ēj:
6.**Sjeyran G. (1928),** GHarabaghi tntjesakan kyank'ĕ ew nra hjerankarnjerĕ, T'i flis, 100 ēj:
7. **Вapcjegov JU. (2008), Nagopnyй Kapaвax v mjezhdunapodnom ppavje i mipovoй politikje.** Dokumjenty i kommjentapiй, V 2 t., t. 1., M.: KPUG", 944 c.:
8. **Volkova N. (1969),** Etnichjeckije ppocjeccy v Zakavkaz'je v XIX-XX vv., Kavkazckiй etnogpafichjeckiй cbopnik, t. 4, otv. pjed. V. K. Gapdanov, Izd-vo «Nauka», M., c. 3-70.

9. **Gpigopjan Al. (2001),** Apmjano-azjepbaйdzhanckije otnoshjenija: Pjealii i pjepcpjektivy, Apmjanckiй cjentp ctpatjegichjeckix i nacional'nyx i iccljedovaniй, JEp., 111 c.:
10.**Djemidov N.,** I cnova Nagopnyй Kapabax // «Ppavda», 1988-07-24:
11.«Zjepkalo», 23.07.2002.
12.**Mipzojan B. (2020),** Nagopnyй Kapabax (Pazmyshljenija nad ctatictikoй), Arts'akhi zh'oghovrdagitut'yunĕ. Azgagrut'yun, h. 4 (4), Stjep'anakjert, Arts'akhi pjetakan hamalsaran, ēj 318-336:
13.**Kapapjetjan M. (1991),** Etnichjeckaja ctpuktupa nacjeljenija Nagopnogo Kapabaxa v 1921g. (Po cjel'cko-xozjaйctvjennoй pjepjepici Azjepbaйdzhana 1921 g.), JEp., 20 c.:
14.Camoobopona apmjan Kipovabada v 1988-1989 gg. glazami ochjevidcjev (2014), Coctavitjeli Gpisha Oganjezov, Gpanush Xapatjan, JEp.: Izd-vo «Gitutjun» NAN PA, 534 c.:
15.**Capkicjan M. (2010),** Nagopnyй Kapabax; voйna i politika (1990-1993 gg.). Voйna v Nagopnom Kapabaxje i vnutpjenniй konflikt v apmjanckom obsh'jectvje, JEp.: Apmjanckiй cjentp ctpatjegichjeckix i nacional'nyx iccljedovaniй, 219 c.:
16.**Tapacov Ct.,** Poccija v Zakavkaz'je: pjepjed otctupljenijem ili bpockom vpjepjed? https://regnum.ru/news/polit/3402302.html (vjerjin mutk'ĕ՝ 18.02.2022).
17.**Tapacov Ct.,** Novaja gjeopolitichjeckaja xopjeogpafija v Zakaykaz'je: vmjecto «3+3»- «3+2», https://regnum.ru/news/polit/3448258.html (vjerjin mutk'ĕ՝ 18.02.2022).
18.Tpjenin D., Poccija i Zakavkaz'je chjepjez god poclje voйny v Kapabaxje. Pocljeclovije k knigje «Bupja na Kavkazje», https://carnegie.ru/commentary/85683 (vjerjin mutk'ĕ՝ 19.02.2022).
19.**Abrahamian L. Hm. (2001),** Civil society born in the square: the Karabagh Movement in Perspective, The Making of Nagorno-Karabagh: From Secession to Republic, Edited by Levon Chorbajian, Houndmills, Basingstoke, Hampshire; New York: Palgrave, pp. 116-134.
20.**Saparov A. (2015),** From conflict to autonomy in the Caucasus. The Soviet Union and the making of Abkhazia, South Ossetia and Nagorno Karabakh, Routledge, London and New York, 200 p.:
21.**Celalettin Yavuz,** Güney Kafkasya'da değişim rüzgarları esiyor!, https://www.yenisafak.com/dusunce-gunlugu/guney-kafkasyada-degisim-ruzgarlari-esiyor-3745296 (vjerjin mutk'ĕ՝ 18.02.2022).

Ներկայացվել է՝ 24.03.2022	Received 24.03.2022	Получено: 24.03.2022
Գրախոսվել է՝ 12.08.2022	Reviewed 12.08.2022	Рассмотрено: 12.08.2022
Ընդունվել է՝ 25.08.2022	Accepted 25.08.2022	Принято: 25.08.2022

E-mail: artak590@gmail.com